ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունիսի 2025 թվականի N 592-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՇԱՆԹ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209–րդ հոդվածով, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «է» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալի 2025 թվականի հունիսի 03-ի N 02/16/04221-2025 գրությունը և կից ներկայացված օրակարգը, 2025թ. հունիսի 6-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայանալիք ՀՀ-ՌԴ միջտարածաշրջանային 10-րդ համաժողովին մասնակցելու նպատակով.

Որոշում եմ՝

1. Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շանթ Ավդալյանին 2025 թվականի հունիսի 6-ին գործուղել Հայաստանի Հանրապետության քաղաք Երևան Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր:
2. Շանթ Ավդալյանի պարտականությունները ժամանակավորապես վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Անդրանիկ Խաչատրյանին:
3.Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին՝ (Ռ. Թեմուրյան) սահմանված կարգով հատուցել գործուղման հետ կապված ծախսերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հունիսի 03
Արաքս համայնք